

## ԼՂՀ գյուղաբնակ քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման պետական ֆինանսական աջակցության ծրագիր

Ծրագրի նպատակն է բարելավել ԼՂՀ գյուղաբնակ քաղաքացիների բնակարանային պայմանները, խթանել ԼՂՀ գյուղական բնակավայրերում բնակարանաշինության զարգացումը:

Ծրագրի շրջանակներում պետական ֆինանսական աջակցության ուղղություններն են.

- բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերման նպատակով փոխառության տրամադրում,
- բնակելի տան կառուցման նպատակով փոխառության տրամադրում
- բնակարանի կամ բնակելի տան վերանորոգման նպատակով փոխառության տրամադրում:

**Ծրագրի շահառուները** 18 տարին լրացած ԼՂՀ քաղաքացիներն են մինչև ԼՂՀ օրենսդրությամբ քաղաքացու համար սահմանված կենսաթոշակային տարիքի լրանալը՝ հետևյալ պայմանների բավարարման դեպքում.

1. Քաղաքացին բնակելի տուն է ձեռք բերում իր բնակության և/կամ հաշվառման բնակավայրում (ամուսիններից առնվազն մեկը):
2. Բնակելի տուն ձեռք բերելու դեպքում պետական աջակցությունից կարող են օգտվել՝
  - այն շահառուները, որոնց սեփականության իրավունքով պատկանող բնակտարածքի մակերեսը մեկ շնչի հաշվարկով չի գերազանցում 18 քառ.մետրը,
  - համատեղ երկու և ավելի ընտանիքներ բնակվելու դեպքում՝ առանձնացող յուրաքանչյուր ընտանիք, անկախ բնակտարածքի մակերեսի մեծությունից:
3. Քաղաքացու կողմից ձեռք բերվող բնակարանի ընդհանուր մակերեսը ընտանիքի անդամների մեկ շնչի հաշվարկով չի գերազանցում.
  - բնակարանի ձեռքբերման դեպքում՝ 30 քառակուսի մետրը,
  - բնակելի տան ձեռքբերման դեպքում՝ 40 քառակուսի մետրը:
4. Երիտասարդ և մեկ շնչից կազմված ընտանիքները կարող են օգտվել «գումարած մեկ» պայմանից, որի դեպքում քաղաքացու ընտանիքի անդամների թվին պայմանականորեն ավելացվում է մեկ՝ քաղաքացու առկա և ձեռք բերվող բնակարանների մակերեսների սահմանային չափերը որոշելու համար:
  - ✓ Երիտասարդ ընտանիք՝ ամուսիններից առնվազն մեկի տարիքը պետական աջակցություն ստանալու հայտ ներկայացնելու օրվա դրությամբ չի գերազանցում 32 տարին,
  - ✓ Մեկ անձից կազմված ընտանիք՝ 32 տարին լրացած Քաղաքացի, որը պետական աջակցություն ստանալու հայտ ներկայացնելու օրվա դրությամբ չի գտնվում ամուսնության մեջ, չունի անչափահաս երեխաներ, խնամարկյալներ, ինչպես նաև հոգաբարձության ներքո անձինք:

**Ձեռք բերվող բնակելի տան/ բնակարանի առավելագույն արժեքը**

Շուկա	Ձեռք բերվող բնակելի տան 1 քառ. մետրի արժեքը (հազար դրամ)	Ձեռք բերվող բնակելի տան ընդհանուր արժեքը (հազար դրամ)
Առաջնային	250,0	25 000,0
Երկրորդային	30,0	4 500,0
Կառուցում	200,0	20 000,0

Բնակելի տան վերանորոգման նպատակով տրամադրվող փոխառության առավելագույն գումարը սահմանվում է մինչև 2 500,0 հազար դրամ:

**Փոխառության տրամադրման պայմանները**

		Հիմնադրամի կողմից սահմանված նվազագույն կանխավճարը (տոկոսներով)	Քաղաքացու կողմից վճարվող փոխառության տարեկան տոկոսադրույքը (տոկոսներով)	Փոխառության առավելագույն ժամկետը (տարի)
Բնակելի տան ձեռքբերում	առաջնային շուկա	10	5	20
	Երկրորդային շուկա	10	5	6
Կառուցում		10	5	20
Վերանորոգում		---	5	5
Ընտանիքի դրամական եկամուտներից կենսաապահովման համար նվազեցվող գումարը 1 շնչի հաշվով կազմում է ոչ պակաս քան ամսական 20,0 հազար դրամ:				

Պետական աջակցությունն ուղղվում է այն շահառուների, որոնք բնակելի տուն են ձեռք բերում իրենց մշտական բնակության և/կամ հաշվառման բնակավայրում/ամուսիններից առնվազն մեկը/, բացառությամբ այն շահառուներին, որոնք նպատակ ունեն օգտվելու պետական աջակցության ծրագրի բնակելի տան կառուցման ուղղությունից, որոնց համար տվյալ բնակավայրում/համայնքում/ հաշվառման նվազագույն ժամկետը սահմանվում է **3 տարի**:

Փոխառությունները շահառուներին տրամադրվում և վերջիններիս կողմից դրանք (փոխառություն և տոկոսավճար) մարվում են բանկային փոխանցմամբ կամ «Արցախփոստ» ՓԲԸ ստորաբաժանումների միջոցով: Փոխառությունները շահառուների կողմից մարվում են եռամսյակային պարբերականությամբ՝ բացառությամբ բնակելի տան կառուցման նպատակով տրամադրված փոխառությունների, որոնց մարումները/հաշվարկված տոկոսագումարների հետ մեկտեղ/ իրականացվում են ամսական պարբերականությամբ:

## Աջակցություն ստանալու ընթացակարգը

**Քայլ 1 Տեղեկանքի լրացումը** Ծրագրի փորձագետը քաղաքացու հետ երկխոսության միջոցով լրացնում է **տեղեկանք`** քաղաքացու տվյալների, պայմանների և ծրագրից ակնկալվող նպատակների մասին: Տեղեկանքում նշված քաղաքացու պայմանները սահմանված պայմաններին բավարարելու դեպքում քաղաքացին փորձագետի կողմից ստանում է նախնական համաձայնություն, որի դեպքում քաղաքացուն տրվում է անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ, որը պատրաստելուց հետո քաղաքացին տեղեկացնում է Հիմնադրամին:

**Քայլ 2 Հայտի լրացումը** Հիմնադրամի աշխատանքային խումբն այցելում է նախնական դրական եզրակացություն ստացած և նշված փաստաթղթերի փաթեթը արդեն պատրաստած շահառուներին` պետական աջակցություն ստանալու մասին **Հայտը** տեղում ընդունելու նպատակով, որտեղ իրականացնում է շահառուի վճարունակության և նրա կողմից ներկայացված տեղեկությունների հավաստիության ստուգում, հավաքագրում է շահառուի անհրաժեշտ փաստաթղթերը, բնակելի տան վերանորոգման դեպքում կայացնում է արատային ակտի ու վերանորոգման ծախսերի, գրավի առարկայի արժեքի վերաբերյալ որոշումներ և անհրաժեշտ այլ աշխատանքներ:

**Քայլ 3 Ֆինանսական կոմիտեի որոշումը** Հիմնադրամի ֆինանսական կոմիտեն քննարկում է ընդունված Հայտը և կայացնում Հայտին դրական եզրակացություն տալու կամ մերժելու մասին համապատասխան որոշում:

**Քայլ 4 Փոխառության և գրավի /հիփոթեքի/ պայմանագրերի կնքումը** Հիմնադրամը, դրական որոշում ստացած Հայտերի մասով, դիմում է շահառուի անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում` անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկատվության /միասնական տեղեկանք/ տրամադրման համար: Հիմնադրամը շահառուի անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումից /զննան դեպքում` շահառուից/ միասնական տեղեկանքը ստանալուց հետո շահառուին /զննան դեպքում նաև վաճառողին/ հրավիրում է նոտարական գրասենյակ, որտեղ ներկայանում է նաև Հիմնադրամի լիազոր անձը և Հիմնադրամի ու Շահառուի միջև կնքվում է փոխառության պայմանագիր: Հիմնադրամի, շահառուի և վաճառողների միջև կնքվում է նաև հիփոթեքի եռակողմ պայմանագիր` նոտարական վավերացմամբ:

**Քայլ 5 Փոխառության տրամադրումը** Հիմնադրամը կամ շահառուն գրավի /հիփոթեքի/ պայմանագրի հիման վրա դիմում է շահառուի հաշվառման վայրի անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում` անշարժ գույքի գրավի վկայականը ստանալու համար: Հիմնադրամը շահառուի անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումից կամ շահառուից ստանում է անշարժ գույքի գրավի վկայականը և երեք աշխատանքային օրվա ընթացքում շահառուին տրամադրում փոխառության գումարը:

**Քայլ 6 Մոնիթորինգը** Հիմնադրամը` սույն ծրագրով սահմանված պետական աջակցություն ստացած շահառուների մոտ, համաձայն փոխառության պայմանագրի, պարբերաբար իրականացնում է մոնիթորինգ:

**Պետական ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով  
շահառուներից պահանջվող փաստաթղթերը**

***Բնակելի տան վերանորոգման նպատակով`***

- տեղեկանք բնակության վայրից ընտանիքի կազմի վերաբերյալ,
- ընտանիքի անդամների անձնագրերի կամ ծննդյան վկայականների պատճենները,
- ընտանիքի եկամուտները հիմնավորող փաստաթղթեր /անհրաժեշտության դեպքում` համայնքի ղեկավարի հավաստմամբ/,
- բնակելի տան սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը:
- սույն ծրագրով սահմանված այլ անհաժեշտ փաստաթղթեր:

***Բնակելի տան գնման նպատակով`***

- տեղեկանք բնակության վայրից ընտանիքի կազմի վերաբերյալ,
- ընտանիքի անդամների անձնագրերի կամ ծննդյան վկայականների պատճենները,
- ընտանիքի եկամուտները հիմնավորող փաստաթղթեր /անհրաժեշտության դեպքում` համայնքի ղեկավարի հավաստմամբ/,
- գնվող բնակելի տան սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը,
- գնվող բնակարանի առքուվաճառքի մասին կողմերի միջև նախնական գրավոր համաձայնությունը,
- բնակարանի ձեռքբերման համար անհրաժեշտ կանխավճարի առկայության մասին հայտարարագիր:
- սույն ծրագրով սահմանված այլ անհաժեշտ փաստաթղթեր:

***Բնակելի տան կառուցման նպատակով`***

- տեղեկանք բնակության վայրից ընտանիքի կազմի վերաբերյալ,
- ընտանիքի անդամների անձնագրերի կամ ծննդյան վկայականների պատճենները,
- ընտանիքի եկամուտները հիմնավորող փաստաթղթեր /անհրաժեշտության դեպքում` համայնքի ղեկավարի հավաստմամբ/,
- համապատասխան հողամասի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը,
- բնակելի տան` համայնքի կողմից հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերը /այդ թվում նաև տիպային/:
- սույն ծրագրով սահմանված այլ անհաժեշտ փաստաթղթեր: